

**«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ հայտարարում է մրցույթ՝ Ֆիզիկական անձանց պրոդուկտների զարգացման բաժինը վարկային պրոդուկտների գծով գլխավոր մասնագետով համալրելու նպատակով**

**Աշխատանքային հիմնական պարտականություններ՝**

- Վարկային և վարկերի հետ կապված CRM պրոդուկտների գծով նորմատիվ-մեթոդոլոգիական փաստաթղթերի՝ որոշումների, հրամանների, ընթացակարգերի, դիմումների և պայմանագրերի տիպային ձևերի, պրոդուկտի պայմանների և բիզնես ընթացակարգերի մշակում և համաձայնեցում համապատասխան ստորաբաժանումների հետ
- Վարկային պրոդուկտների գծով ֆունկցիոնալ պահանջների մշակում և համաձայնեցում համապատասխան ստորաբաժանումների հետ, և մշակված ֆունկցիոնալ պահանջներին համաձայն՝ կատարված փոփոխությունների և լրացումների թեստավորում
- Վարկային պրոդուկտների գծով ուսումնական նյութերի, ավտոմատացված բանկային համակարգի շահագործման ընթացակարգի մշակում
- Պրոդուկտների փորձնական մեկնարկի կազմակերպում, արդյունքների և մասնաճյուղերի հետադարձ կարծիքների ամփոփում
- Վարկային պրոդուկտների մասով փոփոխությունների կատարում և դրանց վերաբերյալ մասնաճյուղային ցանցին և այլ ստորաբաժանումներին պարզաբանող գրությունների պատրաստում
- Վարկային պրոդուկտների գծով ընթացիկ խնդիրների լուծմանը մասնակցություն
- Վարկային պրոդուկտների գծով շուկայի պարբերաբար ուսումնասիրություն
- Վարկային պրոդուկտների պայմանների փոփոխման դեպքում համապատասխան փաստաթղթերի մշակում և փոփոխություն

**Պահանջվող կրթություն և հմտություններ՝**

- Բարձրագույն կրթություն
- Առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ բանկային համակարգում
- Պատասխանատվության բարձր զգացում
- Թիմային աշխատանքի և հաղորդակցման զարգացման հմտություններ
- Բանակցություններ վարելու հմտություններ
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office ծրագրային փաթեթ
- Հստակ սահմանված ժամկետներում աշխատելու ունակություն
- Հայերենի, ռուսերենի, անգլերենի տիրապետում (գրավոր և բանավոր)

## **Դիմելու ընթացակարգը՝**

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը [hr@armbusinessbank.am](mailto:hr@armbusinessbank.am) հասցեին:

## **Վերջնաժամկետ՝ 23.12.2022թ.:**

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ «Chief Specialist on Credit Products – Name, Surname»

Մրցույթի անցկացման վայրը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գլխավոր գրասենյակ, ք. Երևան, Նալբանդյան 48: